

---

---

«ԱԼՁԻ» (ԱՂՁՆԻՔ) ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ

Գիտական շրջանակներում բազմիցս անդրադարձ է կատարվել ինչպես տարբեր ժամանակաշրջաններում Աղձնիքի խաղացած պատմական դերին ու նշանակությանը, այնպես էլ նրա անվան ծագմանը և ստուգաբանությանը: Պատմալեզվաբանությանն առնչվող շատ հարցերում մշտապես առկա է եղել մասնագիտական տարակարծությունը, և տվյալ դեպքում Աղձնիքի ստուգաբանության վերաբերյալ մոտեցումները ևս բացառություն չեն կազմում: «Աղձնիք» տեղանվանն առնչվող մշտապես վիճարկելի հիմնական հարցերից մեկը եղել է այն, թե արդյոք նրա անվան հիմքում ընկած է հեռավոր անցյալի որևէ ցեղանուն, թե այդ տեղանվան մեջ լեզվական այլ հիմքեր պետք է փնտրել: Ըստ Հ. Հյուբշմանի՝ «Աղձնիք միշտ նահանգի անուն է, որովհետև Աղձնիք անունը, որ հոգնակի միայն գործածված կա, երկիր կցուցանե և Աղձնի եզակին չունի, ուստի գեթ պատմական ժամանակներում մեջ կերևա, թե ժողովրդի մը անուն համարված չէ և կրնանք բնիկ երկրանուն համարիլ»<sup>1</sup>: Կա նաև կարծիք, ինչպես արդեն ասվեց, որի համաձայն Աղձնիք տեղանվան հիմքում պետք է փնտրել հնագույն մի ցեղանուն<sup>2</sup>: Այս առնչությամբ, թերևս, տրամաբանական կլինի նախնառաջ քննության առնել սեպագրային «Ալզի» տեղանունը, որը, ըստ էության, իր մեջ կրում է «Աղձնիք» անվան վաղնջական ձևը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 74:

<sup>2</sup> Ըստ Թ. Խ. Հակոբյանի՝ «Աղձնիք» նշանակում է «աղձիներ» (ժողովուրդ) և նրանց կողմից բնակեցված երկիրը՝ օրինակ բերելով «Հայք»՝ հայեր (ժողովուրդ) և «Հայաստան» (երկիր), «Կորձայք»՝ «կորձեր», «Գամիրք»՝ «կիմերներ» և այլն (տե՛ս Թ. Խ. Հակոբյան. Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 74: Տե՛ս նաև՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 180: Այս տեղանունը գրավոր որևէ աղբյուրում «Աղձնի» ձևով չի հիշատակվում (տե՛ս նաև վերոգրյալում մեջբերված Հ. Հյուբշմանի տեսակետն այս հարցի առնչությամբ), և դա հիմք է տալիս կարծելու, որ Աղձնիք տեղանվան հիմքում ընկած է նրա վարչաքաղաքական կենտրոնը հանդիսացող Աղձն/Արձն գավառը: Հետևաբար, կարծում ենք, որ, ըստ երևույթին, Աղձնիքի հիմքում ոչ թե «Աղձնի»-ն է -ք հոգնակիակերտ մասնիկով, այլ «Աղձն»-ը՝ -իք վերջածանցով: Բսկ «Աղձն/Արձն» տեղանվան -ն վերջավորությունը, ամենայն հավանականությամբ, գրաբարյան մուկն, ձուկն, լեռնն և այլ ձևերում հանդիպող -ն մասնիկն է: Ի դեպ, թե՛ սեպագիր և թե՛ միջնադարյան որևէ աղբյուրում «աղձիներ» ցեղ կամ ժողովուրդ երբևէ չի հիշատակվում:

<sup>3</sup> Վ. Բելք. Աղձնիք.- «Հանդես ամսօրյա», 1904, թիվ 3, էջ 66, Գր. Капанцяна. Хайаса-колыбель армян. Ереван. 1948, с. 143, 178, 199, 201, 249; М. Л. Хачикян. Хурритский и урартский языки. Ереван. 1985, с. 40; Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 19, Ս. Տրեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 34, Ս. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Երևան, 2004, էջ 34, նույնի՝ Մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 162, 165:



որոշ մասնագետների, նշանակում են ժայռի վրա/ժայռային կամ լեռնային <sup>8</sup>: Մակայն այստեղ հասկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ դեռևս Ուրարտուի ստեղծումից շուրջ հինգ դար առաջ ուրարտական Alzini ձևին նախորդում է խեթական ու ասորեստանյան Alzi ձևը: Հետևաբար, ուրարտական Alzini-ն իր հիմքում, հավանաբար, պետք է ունենար խեթա-ասորեստանյան Alzi ձևը, իսկ վերջինս էլ, ըստ երևույթին, իր մեջ պիտի կրեր հենց այն բառիմաստը, որը կրում է ուրարտական Alzini-ն: Մյուս կողմից՝ ասվածը միգրացե հաստատելու է գալիս այն հանգամանքը, որ եթե ընդունելու լինենք Alzi-Alzini-alzini/alzina բառիմաստային առնչակցությունը, ապա լիովին հնարավոր է դառնում Alz(i)+ini բառակազմությունը, որտեղ alz(i)-ն բառարմատն է, իսկ ini-ն՝ ուրարտերենի ածականակերտ ածանց<sup>9</sup>. վերջինս հատուկ է ուրարտական տեքստերում

<sup>8</sup> Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 434; Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи.– ВДИ, 1971, № 4, с. 267–268; Գ. Միքաելյան. Աղձնիքը խեթական և ասորեստանյան պետությունների նվաճողական ծրագրերում (Բ. ա. 14–9-րդ դդ.)– Հայոց պատմության հարցեր, Երևան, 2010, էջ 3: Ն. Հարությունյանը alzini/alzina բառերի բացատրությունը տալիս հղում է կատարում Գ. Մելիքիշվիլու վերոնշյալ աշխատանքից, որտեղ վերջինս իր հերթին տվյալ բառի իմաստը որոշելիս առաջնորդվում է N482 սեպագիր տեքստի 1–2-րդ տողերում հանդիպող pulusi alzini-ei բառակապակցությամբ: Pulusi-ն ուրարտերենում կրում է քարեայուն, քարակոթող, կոթող իմաստները և հիմնականում նկատի ունի սեպագիր արձանագրությունները, իսկ քանի որ այդ արձանագրությունը փորագրված է ժայռի վրա, Մելիքիշվիլին տեքստում հանդիպող pulusi alzini-ei բառակապակցությունից բխեցնում է, որ alzini-ei բաղադրիչը տվյալ համատեքստում կրում է «ժայռի վրա» իմաստը (ռուսերեն տեքստում առկա է «на скаленном» բառը): Հավանաբար, ինչպես նշում է Ն. Հարությունյանը, նույն կամ մոտավոր իմաստն ունի նաև alzina բառը, որը հիշատակվում է -424 արձանագրության 9-րդ տողում և առնչվում է Խալդյան դարպասների հետ (հմտ. <sup>GIS</sup>KR alzina-i): Տե՛ս նաև՝ Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей, с. 434. al-zi-ni-e-i 123<sub>3</sub>; 482<sub>3</sub>; al-zi-na-i 270<sub>1</sub>; 406 обор.<sub>13</sub>; 416<sub>10</sub>; 424<sub>6</sub>; al-zi-na-a-i; 418<sub>3,4</sub>: Մակայն, ի հավելումն այս ամենի, այստեղ հարկ ենք համարում նշել, որ Գ. Մելիքիշվիլին, ինչպես Ն. Հարությունյանը, ըստ էության, չեն նշում alzini, alzina բառերի արտատեքստային նշանակությունը: Տվյալ դեպքում մենք alzini, alzina բառերի համար առաջարկում ենք ժայռային/ժայռոտ, լեռնային, վիմային, քարքարոտ իմաստները: Այսպիսով, ելնելով վերոգրյալից, ստացվում է, որ «pulusi alzini-ei» բառակապակցությունը, ըստ երևույթին, նշանակում է «արձանագրություն ժայռի վրա» կամ այլ կերպ ասած՝ «վիմական/ժայռային/վիմափոր/ժայռափոր արձանագրություն/կոթող», ինչպես նաև եթե իմաստային հարաբերակցության մեջ դիտարկենք վերոնշյալ alzini, alzina բառերը հայերենի արձան բառի հետ (քանի որ հին հայերենում այն ուներ ոչ միայն «ժայռ, լեռ, քար», այլև «արձանագրություն, կոթող» իմաստները), թերևս, հնարավոր է նաև «կոթող-արձան/արձանագրություն» կամ «արձանակոթող» տարբերակները: Իսկ <sup>GIS</sup>KR alzina-i-ի համար առաջարկում ենք «ժայռե/քարե դարպասներ» տարբերակը:

<sup>9</sup> Տե՛ս Գր. Капанцян. Хайаса–колыбель армян, с. 178–179. Գ. Ղափանցյանը նշում է, որ -ini վերջածանցով խորրիերեն և ուրարտերեն լեզուներում կազմվում են ստացական հոլով ունեցող պատկանելություն ցույց տվող ածականներ, ինչպես օրինակ, Alzi տեղանունից ստացվում է Alzini, որը, սակայն, բացի «ալզիական/ալզյան» իմաստից, ունի նաև «ալզեցի» նշանակությունը: Հետաքրքրական է և միաժամանակ խնդրահարույց այն հանգամանքը, որ ուրարտական սեպագիր տեքստերում alz(i) բառերի է չի հանդիպում, մինչդեռ alzini, alzina բառաձևերը ոչ հաճախ, սակայն հանդիպում են ուրարտական սեպագիր արձանագրություններում: Այսուհանդերձ, հաշվի առնելով խորրի-ուրարտական լեզվածագումնաբանական ընդհանուր առնչությունները, տվյալ դեպքում՝ մասնավորապես, դրանց ընդհանուր բառալթերքը և հատկապես բառարմատները, ինչպես նաև այն փաստը, որ Ալզի քաղաքական միավորը Միտտանիի հարևանն ու նրա ժամանակակիցն էր, իսկ վերջինիս պաշտոնական գրագրության լեզուն խորրիերենն էր, Alzi տեղանվան ստուգաբանական ուսումնասիրության շրջանակներում փորձեցինք վերջինիս լեզվաիմաստային ծագումնաբանությունը փնտրել խորրիերենի և խորրի-ուրարտերենի համեմատական բառարաններում, համապատասխան

հիշատակվող մի շարք տեղանուններին<sup>10</sup>: Ի մի բերելով ասելիքը, թերևս, միանգամայն տրամաբանական կարող է լինել այն, որ եթե *alzini*, *alzina* բառերն ունեն ժայռային/վիմային և լեռնային իմաստները, ապա դրանից, հավանաբար, կարելի է գալ այն հետևությանը, որ, ըստ երևույթին, *alz(i)* արմատը պետք է ունենա համապատասխանաբար ժայռ/վեմ և լեռ իմաստները: Թերևս, *alz(i)* արմատի օգտին կարող է խոսել նաև այն, որ իտալական աղբյուրներում հիշատակվող *Alziya* ձևն իր հերթին ներկայացնում է *Alzi+ya* բառակազմությունը, որտեղ *Alz(i)*-ն տվյալ տեղանվան հիմքում ընկած բառարմատ-ձևն է, իսկ *(i)ya-ն*<sup>11</sup>՝ խեթերի կողմից ավելացված տեղանվանական վերջածանցը<sup>12</sup>: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ *Alzi* տեղանունը, ըստ երևույթին, պետք է նշանակեր «ժայռերի/լեռների երկիր», ինչն էլ, հավանաբար, պայմանավորված է Հայկական Տավրոսի լեռնային բարդ տեղանքով: Իսկ եթե դա, իրոք այդպես է, ապա ինքնրստինքյան հերքվում է այն տեսակետը, որի համաձայն Ալզի-Ալձնիք տեղանվան հիմքում կարող է հնագույն ինչ-որ ցեղանուն ընկած լինել:

ուսումնասիրողական ձեռնարկներում, հնալեզվաբանական տարբեր աշխատություններում: Նաև ուսումնասիրեցինք տվյալ տեղանվան իտալական ծագում ունենալու վարկածը: Սակայն նախաուրարտական սեպագիր տեղեկություններով *Alzi*-ի ստուգաբանությանն ուղղված ջանքերն առայժմ մնում են ապարդյուն: Մեծ վերապահումով մտնելով *Alzi/Alzini*-ի ուրարտական ծագում ունենալուն և, ըստ երևույթին, այս տեսակետը համարելով տեսականորեն անհնարին, միևնույն ժամանակ հարկ է նշել, որ սեպագրային շրջանից առայժմ ձեռքի տակ եղած քիչ թե շատ արժանահավատ փաստը, որը կարող է լույս սփռել այս տեղանվան ստուգաբանության վրա, հենց ուրարտական աղբյուրներում վկայակոչվող *Alzini* տեղանունն ու *alzini*, *alzina* բառերն են: Թերևս մնում է կարծել, որ տվյալ տեղանունը, ըստ երևույթին, կամ դեռևս չհայտնաբերված անծանոթ խուրրիերեն բառ է, կամ էլ, հավանաբար, լեզվական այլ ծագում ունի: Ամեն դեպքում վերոգրյալից կարելի է գալ այն հետևությանը, որ, ամենայն հավանականությամբ, *Alzi* երկրանունը պատմական որոշակի ժամանակաշրջանում ծագել է հենց տվյալ տարածքում ապրող բնիկների լեզվից:

<sup>10</sup> -ni կամ -ini վերջավորությունն ունեն ուրարտական սեպագրերում հիշատակվող մի շարք տեղանուններ, ինչպես, օրինակ, *Abasini*, *Alaini*, *Ardini*, *Ariaini*, *Arini*, *Atezaini*, *Aturgini*, *Guriaini*, *Didini*, *Irkimaini*, *Kadiaini*, *Kulbitarrini*, *Kulibarzini*, *Pilakin(n)i*, *Piriuaini*, *Rišuaini*, *Sasini*, *Teišebaini*, *Umešini*, *Urini* և այլ տեղանուններ (տե՛ս *H. B. A p y t y o n y a . T o p o n i m i k a Y r a p r y , c . 8 , 9 , 10 , 13 , 17 , 33 , 35 , 46 , 47 , 67 , 73 , 87 , 116 , 117 , 140 , 146 , 149 , 159 , 162*):

<sup>11</sup> *St u M. J. X a c i k y a n . X y r r i t c k i j i y u r a r t c k i j i j a z y k i , c . 59 . Այստեղ կարևոր է նշել, որ -wa/-ua և -ya վերջավորություններն ունեցող տեղանունները հնում բնորոշ էին հատկապես բարձրադիր լեռնաաշխարհագրական տարածքներին ու երկրամասերին (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Տիգրիս գետի ավազան): Այսուամենայնիվ, փաստորեն, հենց այդ նույն լեռնաաշխարհագրական տեղանունները հանդիպում են թե՛ այս վերջավորություններով և թե՛ առանց դրանց. օրինակ՝ խեթ. *Sala-wpp*, *Salua*; խեթ. *Alse*, *Alzi* և *Alziya* և այլն: Ի հավելումն ասվածի՝ -wa վերջավորությունն ունեցող տեղանունները գլխավորապես հանդիպում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան ու հարավային մասերում, իսկ -ya վերջավորությամբ տեղանուններ չի բացառվում, որ կարող էին լինել նաև վերջինիս արևելյան հատվածում: Թերևս վերն ասվածը ևս մեկ անգամ փաստում է Ալզիի՝ լեռնային երկիր լինելու հանգամանքը:*

<sup>12</sup> *Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն . Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 331, Կ. Ն. Խ ա չ ա տ ր յ ա ն . Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 41, 43, 44: Այս վերջածանցն ունեն իտալական մի շարք տեղանուններ, ինչպես օրինակ՝ Ադանիյա, Ալասիյա, Անձիլիյա, Աոնիյա, Արծիյա, Վարսիյա, Վիլուսիյա, Գասիյա, Գասիյա, Գատիարիյա, Կիսիյա, Կունտիյա, Կուրուպիյա, Կուցասարիյա, Լավացանտիյա, Լամիյա, Լացումիյա, Մալդիյա, Մելիլիյա, Սալիյա, Սարիյա, Տավալիյա, Տիկումիյա, Ունալիյա, Խավիլիյա, Էլուրիյա և այլն: *St u ն ա ն՝* *B. H. X a c a t r y a n . B o c t o c h n e p r o v i n c i j a H e t t c k o j i m p e r i j a , c . 10 , 17 , 18 , 23 , 28 , 30 , 32 , 53 , 55 , 62 , 68 , 69 , 76 , 78 , 85 , 91 , 92 , 93 , 106 , 107 , 108 , 115 , 119 , 120 , 126 , 140 .**

Այս առնչությամբ իրենց հերթին կարող են որոշակի հետաքրքրություն ներկայացնել նաև հայերենի Աղձն/Արձն հաստուկ անունն ու արձան, արձագանք գոյականները: Ինչ վերաբերում է Աղձն/Արձն տեղանվանը, ապա հենց վերջինս էլ, ըստ երևույթին, ընկած է Աղձնիք անվան հիմքում: Աղձն/Արձն-ը հանդիսացել է Աղձնիքի առաջին գավառը, և, թերևս, հենց նրա անվանումն էլ հետագայում տարածվել է ամբողջ նահանգի վրա<sup>13</sup>:

Խոսելով արձան բառի մասին՝ նախևառաջ անհրաժեշտ է նշել, որ վերջինիս լեզվական ծագումը դեռևս մնում է անհայտ և չստուգաբանված<sup>14</sup>: Այսուհանդերձ, միանգամայն պարզ է դրա իմաստը: Ըստ Հ. Աճառյանի՝ արձան բառը նշանակում է «կոթոն, սահմանաքար, մահարձան, մեծ քար, կուռք»<sup>15</sup>, իսկ մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «կոթոն, որձաքար կանգուն, քար, վեմ, արձանագրություն» կամ «բարձր տնկեալ տախտակ կամ սիւն քարեղէն հանդերձ յիշատակագրութեամբ, մանաւանդ տապանաքար ուղղորդ՝ ի յիշատակ մեռելոյն, և քարակոթոն ի վերայ ճանապարհի ի նշանակ սահմանաց, կամ մղոնաց, յաղթութեան, դաշանց, և այլն», ինչպես և «արձան ոչ միայն քարն որ ի վերայ գերեզմանին՝ ասի, յորժամ գրեն և արձանացուցանեն զհաղթութիւն պատերազմաց, զավերումն քաղաքաց»<sup>16</sup>:

Մյուս՝ արձագանք բառը Հ. Աճառյանը ստուգաբանում է արձ+գանգին արմատական վերլուծությամբ, որտեղ գտնում է, որ առաջին արմատը՝ արձ-ը անձանոթ է, իսկ երկրորդը՝ գանգին-ը «հնչիւն» բառն է: Այս առնչությամբ նա մեջբերում է Գրիգոր Նարեկացու խոսքերը. «Ոչ արձագանք արձանաց ի խորոց ինչ գանչութենէ խիստս առաքեցեալ» և նշում, որ տվյալ դեպքում արձան ասելով պետք է հասկանալ «քար, ժայռ, վեմ» բառերը, հետևաբար, արձագանք<sup>17</sup> նշանակում է «քարերի ձայն»<sup>18</sup>: Արձագանք նաև նշանակում է «գանգին արձանաց կամ գանչիւն յարձանաց. այսինքն հնչիւն փոխադարձեալ ի սեանց, ի վիմաց, ի լերանց, ի քարանձաւաց, և այլն»<sup>19</sup>:

Ինչպես արդեն ցույց տրվեց վերը, ուրարտական սեպագիր արձանագրությունների alzi(n), alzina բառերը, հավանաբար, կրում են «ժայռային, լեռնային» իմաստները և, ըստ երևույթին, իրենց հերթին կարող են ենթադրել alz(i)՝ «ժայռ, վեմ, լեռ, քար» իմաստը կրող արմատը, որը, սակայն, բացակայում է ուրարտական սեպագիր տեքստերում: «Ժայռ, վեմ, լեռ, քար» իմաստն է արտահայտում նաև հայերենի արձան բառը, որը, ինչպես արդեն պարզ դարձավ արձագանք բառի արմատական ստուգաբա-

<sup>13</sup> Տե՛ս Ս. Է. փ. ի. կ. ե. ա. ն. Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1906, էջ 102:

<sup>14</sup> Հ. Աճառյան. Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնև, 2004, էջ 37, Հ. Աճառյան. Հայերենի արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 325, Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 265: Խնդիրն այն է, որ արձան բառը, ըստ երևույթին, հնդեվրոպական ընդհանուր արմատից չի սերում, որովհետև, ինչպես գտնում են վերը նշված հեղինակները, հնդեվրոպական որևէ լեզվում այս բառը չունի արմատածագումնաբանական իր գույաներ տարբերակը:

<sup>15</sup> Հ. Աճառյան. Հայերենի արմատական բառարան, հ. 1, էջ 325:

<sup>16</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 366, 367:

<sup>17</sup> Արձագանք բառի գրաբարյան ճիշտ ձևն է. տե՛ս Հ. Աճառյան. Հայերենի արմատական բառարան, հ. 1, էջ 323:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>19</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 364, 365:

նությունից, իր մեջ կրում է անըստգուտ արձ արմատը<sup>20</sup>: Հետևաբար, եթե առնչակցելու լինենք *alz(i)* և արձ արմատները, ապա կարող է ստացվել հետևյալ հետաքրքիր պատկերը: Նախնառաջ հաշվի առնելով հայոց լեզվի պատմական զարգացման գործընթացը՝ տվյալ դեպքում լ-դ և ապա լ-ր ու դ-ր անցումները<sup>21</sup>, ինչպես նաև այն, որ ուրարտական սեպագիր արձանագրություններում *z* տառով հանդես եկող վանկագիր-սեպանշանները, ելնելով սեպագիր գրահամակարգի առանձնահատկություններից, չէին կարող արտահայտել *ձ* հնչյունը<sup>22</sup>, լիովին հնարավոր է դառնում այս արմատների նույնությունը, սակայն, անշուշտ, հաշվի առնելով հայերենի ուրույն պատմական զարգացումներն ու դրանց ընթացքում ձեռք բերված լեզվական առանձնահատկությունները: Այստեղ միանգամայն հնարավոր է միննույն արմատաձագումնաբանական առնչակցության մեջ դիտարկել նաև Ալզի-Աղձն/Արձն տեղանունները, ինչպես դա արվեց *alz(i)* – արձ-ի դեպքում՝ կիրառելով հայերենի պատմական զարգացման գործընթացին բնորոշ հնչույթների դիրքային տարբերակների և ձայնորդների անցումների միննույն մոտեցումը: Ամփոփելով ասելիքը՝ կարևոր է նաև նշել, որ աղձ/արձ արմատը, ըստ երևույթին, ընկած է պատմական Հայաստանի մի շարք տեղանունների հիմքում և նշանակում է ժայռոտ, լեռնային, քարքարոտ միջավայր ունեցող կամ այդպիսի տարածքում գտնվող, ինչպես օրինակ՝ Աղձունիք, Աղձիզետ, Աղձք (նաև՝ Աղց, Աղցք, Աղցից, Աղցուց գյուղ)<sup>23</sup>, Աղձնիք Վարի, Աղձնիք Վերին, Ար-

<sup>20</sup> Հետաքրքրական է, որ այս արմատը հայոց լեզվում երբեք առանձին հանդես չի գալիս (ըստ երևույթին, նաև ենթադրվող *alz(i)* արմատն ուրարտական արձանագրություններում), այլ միայն վերոնշյալ արձան, արձագանք և այլ բառերում (թերևս, ինչպես *alz(i)*-ն՝ համապատասխանաբար *alzini*, *alzina* ձևերում): Թեպետ այս արմատի լեզվական ծագումը դեռևս անհայտ է, այնուամենայնիվ, վստահաբար կարելի է ասել, որ առնվազն նրա իմաստը կամ իմաստներից են «ժայռ, վեժ, լեռ» բառերը:

<sup>21</sup> Հին հայերենում լ ձայնույթն աստիճանաբար հանդես է գալիս երկու դիրքային՝ լ և ղ տարբերակներով, ինչպես, օրինակ, աղի և անալի և այլն (տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 346): Ինչ վերաբերում է դ-ր/ռ անցմանը, ապա Գ. Ջ ա հ ու կ յ ա ն ը որպես դրա վառ օրինակ է բերում քաղցկեղ և քարցկեղ, բաղեղ և բառեղ, մղեղ և մռեղ և այլն (տե՛ս Գ. Դ շ ա յ կ յ ա ն. Очерки по истории дописменного периода армянского языка. Ереван, 1967, с. 312):

<sup>22</sup> Տե՛ս Գ. Դ շ ա յ կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 430:

<sup>23</sup> Նախկին Աշտարակի շրջանի և ներկայիս Արագածոտնի մարզի՝ Աշտարակ քաղաքից ոչ այնքան հեռվում գտնվող Չորափ գյուղն է (տե՛ս Գ. ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Սովետական Հայաստանի նոր տեղանունների մասին. – ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1954, -1, էջ 18): Ինչ վերաբերում է այս տեղանվան ստուգաբանությանը, ապա դրա հիմքում, հավանաբար, ի թիվս վերոնշյալ տեղանունների, պետք է նույնպես փնտրել արձ/աղձ արմատը: Այս գյուղը, հիրավի, գտնվում է ձորի ափին՝ այսինքն ժայռի վրա և այդ պատճառով էլ, թերևս, ստացել է նախկին Աղձք/Աղց/Աղցք անվանումը, որը, հավանաբար, փաստվում է նաև այժմյան Չորափ անվամբ: Անդրադառնալով այս տեղանվան Աղց/Աղցք տարբերակներին՝ հարկ է նշել, որ հին հայերենում, ինչու չէ, նաև այժմ, առկա է *ձ-ց* անցումը և տվյալ դեպքում *ց* հնչույթով հանդես եկող տարբերակները միայն հետագա զարգացումների արդյունք են (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 182, 200, 457, 507): Մյուս կողմից՝ Հ. Աճառյանը աղց բառը ստուգաբանում է որպես «պետք, կարիք, հարկաւորութիւն, ներքին պահանջ»՝ բերելով նաև դրա աղցք «կարիք, պետք» տարբերակը, ինչպես նաև աղց արմատով կազմված աղցաւոր՝ «1. կարօտ, թշուառ 2. պիտանի, կարևոր 3. Անհրաժեշտ», աղցաւորագոյն «աւելի կարևոր», աղցաւորութիւն «կարոտութիւն, բնութեան պահանջ», միաժամանակ նշելով, որ աղց բառին տրվող «ցաւ, վիշտ» նշանակությունը սխալմունք է: Տրամաբանական է, որ այս տեղանունը հազիվ թե իր մեջ կրեր այնպիսի իմաստներ, որոնք արտահայտում են կարիք, պետք, հարկաւորություն, ներքին պահանջ բառիմաստները՝ չխոսելով վերջինիս սխալմամբ տրվող «ցաւ, վիշտ» նշանակությունների մասին:

ձար, Արձախ (Արձախա աշխարհ, Արցախ), Արձախամայրի, Արձանաձոր, Արձանաքար, Արձավակաց գյուղ, Արձե, Արձիան, Արձկաղ, Արձկե, Արձն, Արձնի, Արձանիա (Արցանիա) և այլն<sup>24</sup>:

Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը, հավանաբար, կարելի է գալ այն եզրահագնմանը, որ դեռևս սեպագիր աղբյուրներում հիշատակվող Ալզի-Աղձնիք պատմական տարածքն իր անվան հիմքում ունեցել է «ժայռ, վեմ, լեռ» իմաստները և, հետևաբար, թե՛ հնագույն ժամանակաշրջանում և թե՛ միջնադարում հայտնի է եղել որպես «ժայռերի/լեռների երկիր»:

#### К ВОПРОСАМ ЭТИМОЛОГИИ ТОПОНИМА «АЛЗИ» (АЛЗНИК)

*АРУТЮН ХУДАНЯН*

#### Резюме

Упоминания о древнем царстве Алзи(ни) хоть редки, однако хеттские, ассирийские и урартские клинописные надписи иногда указывают о политической роли и важности последнего в древнем мире. По вышеупомянутым источникам, «страна» Алзи должна была находиться на юго-западной границе Армянского нагорья и соответствовать территории провинции Алзник средневековой Армении. Историко-сравнительное лингвистическое исследование, основанное на древних клинописных и средневековых источниках, в свою очередь, подтверждает семантическую идентичность топонимов Алзи и Алзник. В результате исследования можно утверждать, что в основе происхождения топонима Алзи должен быть *alz(i)*, который может означать «скала, гора, камень», следовательно топоним «Алзи/Алзник» должен означать «страна скал/гор».

#### TO THE QUESTIONS OF THE ETYMOLOGY OF THE TOPONYM “ALZI” (AGHDZNIK/ALZNIKH)

*HARUTYUN KHUDANYAN*

#### Summary

Recordings about the ancient kingdom of Alzi(ni) are rare, however the Hittite, Assyrian and Urartian cuneiform inscriptions occasionally mention about its political role and importance played in the Ancient World. According to the afore-mentioned sources, the “country” of Alzi must have been located in the South-Western border of the Armenian Highland and resembled with the territory of the province of Aghdznik/Alznikh of Medieval Armenia. The historical-comparative linguistic study based on the old cuneiform and medieval data in its turn comes to prove the semantic resemblance of the toponyms of Alzi and Aghdznik/Alznikh. As a result of the study it can be concluded that the semantic root lying in the origin of the toponym of Alzi must have been *alz(i)* which had the meanings of “cliff, rock, mountain, stone”, and therefore the toponym “Alzi/ Aghdznik/Alznikh” must have meant “The Land of Rocks/Cliffs”.

<sup>24</sup> Տե՛ս նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 180, 181, 182, 200, 457, 507: